ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
18 ապրիլի 2025 թվական, N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-073-0237-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.53486 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, 77-րդ և 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածներով, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերով, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերով, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը, N 19032025-06-0042 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0237-0017 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի, 0.53486 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել ժամանակավոր օգտագործման մրցութային կարգով:

   Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 16000 (տասնվեց հազար) դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք

ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝
   1) Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):
   2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:
   3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ (16)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (1)
ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ		ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ
ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ		
ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ		
ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ		
ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ		
ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ		
ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ		
ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ		

ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ
ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԴՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., ապրիլի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի